

«Ֆոր Էյ Բնասլրինգ» ՓԲԸ



“Four A Consulting” CJSC

audit — accounting — advisory — assurance

Լիցենզիա ԱՕ 102
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան 22,
Հեռախոս +374(10) 52 08 47

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

License ԱՕ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիա ԹԻ-ՎԻ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Մենք պատասխանատու ենք անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի

«Տոր Էյ Քոնսալթինգ» ՓԲԸ



“Four A Consulting” CJSC

audit accounting advisory assurance

Լիցենզիա ԱՕ 102
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

License ԱՕ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ-ի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքի շարադրում

Առանց ստորև ներկայացված հարցերի վերաբերյալ վերապահումներ կատարելու, ուշադրություն ենք հրավիրում սեփական կապիտալին, որտեղ երևում է, որ Ընկերությունն ունի վնասներ: Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ուստի, ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի նվազումը: Այս գործունեների առկայությունը, կասկածներ են առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով Ընկերության գործունեության զարգացման ծրագիրը ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը:

20 հունիսի, 2017թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր

Անդրեաս Հովհաննիսյան
Աուդիտի ղեկավար-Բաժնետեր



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	281,874	438,993
Ոչ նյութական ակտիվներ	5	108,620	117,449
Հետաձգված հարկային ակտիվներ	6	5,785	7,560
Տրված կանխավճարներ		13,311	18,605
		409,590	582,607
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	7,158	5,095
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	156,650	189,470
Շահութահարկի գծով կանխավճար		-	9,942
Տրամադրված փոխառություններ	9	7,947,662	7,397,426
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	25,092	43,210
		8,136,562	7,645,143
Ընդամենը ակտիվներ		8,546,152	8,227,750
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	11	1,024,630	1,024,630
Կուտակված վնաս		(283,036)	(351,353)
		741,594	673,277
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	12	6,399,860	6,526,733
Ակտիվներին վերաբերվող շնորհ	14	-	1,119
		6,399,860	6,527,852
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	12	273,471	157,166
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	1,112,412	869,455
Շահութահարկի գծով պարտավորություն		18,815	-
		1,404,698	1,026,621
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		8,546,152	8,227,750

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. հունիսի 20-ին՝

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Գավիթ Բարսիսյան

Չարուհի Ասատրյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի	2015թ. դեկտեմբերի
		31-ին ավարտված տարի	31-ին ավարտված տարի
			2,248,947
Հասույթ	15	2,230,473	76,960
Այլ եկամուտներ		15,609	2,325,907
		2,246,082	
Փոխհատուցում աշխատակիցներին		(389,527)	(413,632)
Մաշվածություն և ամորտիզացիա		(372,621)	(486,081)
Հաղորդումների ծախսեր		(341,697)	(281,329)
Տարածքի վարձակալության ծախսեր		(162,000)	(162,000)
Արբանյակային հեռարձակման ծախսեր		(98,440)	(131,601)
Հեռուստահեռարձակման սպասարկման ծախսեր		(20,700)	(20,353)
Իրավունքների օգտագործման գծով ծախսեր		(17,090)	(35,238)
Նյութական ծախսեր		-	(4,638)
Այլ ծախսեր	16	(158,587)	(165,843)
Գործառնական գործունեությունից շահույթ		685,420	625,192
Ֆինանսական ծախսեր, գուտ	17	(589,896)	(525,294)
Այլ ֆինանսական հոդվածներ, գուտ	18	248	(33,822)
Շահույթ մինչև հարկելը		95,772	66,076
Շահութահարկի գծով ծախս	19	(27,455)	(26,946)
Զուտ շահույթ		68,317	39,130
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			-
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին		-	-
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		68,317	39,130

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: